

ствующих экономической войне государства. Государственный долг является мощным неинфляционным источником финансирования дефицита бюджета. Проблемы управления государственным долгом имеют особое значение на 2007-2009 годы. В контексте глобального финансово-экономического кризиса, когда политики, ориентированные на политику, в ситуационном и долгосрочном управлении долгом в отдельных странах были нацелены на достижение максимального эффекта, эти страны рискуют нарушить финансовую систему и дефолт государства. Проблема управления внешним долгом является более острой и перспективы развития экономики, а также перспективы сохранения своих позиций в глобальной экономической системе от него.

LUSINE ARAKELYAN

### STATISTICAL ANALYSIS AND FORECASTING OF PUBLIC DEBT

Key words: public debt, external public debt, domestic public debt.

In the context of economic globalization many countries in the world are applying for external funding sources implementing economic transformations. The state debt is one of the most important budgeting measures contributing to the implementation of the state's economic strategy. The state debt is a powerful non-inflationary source of funding for budget deficit. The problems of public debt management have been of particular importance for 2007-2009. In the context of the global financial and economic crisis when the policy of targeted and short-term debt management in separate countries has been built, these policies have put them in the real danger of disrupting the state of the financial system and the state's default. The problem of external debt management is more acute and prospects for the development of the economy, as well as the perspective of maintaining its position in the global economic system from it. The issue of the external debt management of the RA is more acute and remarkable both in terms of the prospects of the national economy development and for the maintenance of its positions in the global economic system.

### ՄԵՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Միջազգային տնտեսական  
հարաբերություններ, մազիստրատուրա,  
1-ին կուրս

### ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. փոքր բիզնես, տնտեսության զարգացում,  
ՓՄՁ, փոքր բիզնեսի զարգացում, փոքր ձեռ-  
նարկություն, զարգացման հիմնախնդիրներ


Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը կարևոր նշանակություն ունի երկրի առաջընթացի համար: Նրա ազդեցությունը յուրաքանչյուր երկրի հասարակական և տնտեսական խնդիրների լուծմանն ուղղված նպատակների կազմավորման գործում պահանջում է պետության կողմից շարունակական վերահսկում և վերջինիս գործունեության վրա ազդող բազմաթիվ գործոնների վերլուծություն: Սա կարևոր հիմնախնդիր է նաև ՀՀ տնտեսության համար, ուստի մեծ ուշադրության է արժանի:

ՓՄՁ ոլորտի համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս ձեռնարկությունների 90%-ը կազմում են ՓՄՁ սուբյեկտները: Ձեռնարկատիրությունը ոչ միայն գործարարության ձև է, այլ նաև մտածողության և ապրելակերպի դրսևորում տնտեսական դաշտում գործունեություն ծավալել ցանկացող յուրաքանչյուրի համար: Իր տեսակի մեջ այն համատեղում է պետության, հասարակության, սեփականության և սոցիալական շահերը, որոնք իրականացվում են մի շարք գործոնների փոխներգործության շնորհիվ:

Միջազգային հեղինակավոր կառույցները ժամանակ առ ժամանակ կատարում են հետազոտություններ՝ աղքատության կրճատմանը նպաստելու ուղիների հայտնաբերման և աշխարհում ներկա իրավիճակի վերլուծման նպատակով: Արդյունքները փաստում են, որ աղքատությունից խուսափելու առավել արդյունավետ միջոց է սեփական գործի նախաձեռնումը: Այստեղ էլ կարևորվում է ՓՄՁ-ների դերը:

Սույն հոդվածի նպատակն է.

- ուսումնասիրել ՀՀ-ում ձեռնարկատիրական միջավայրը և հստակեցնել վերջինիս բարելավման ուղիները,
- հետազոտել ՓՄՁ ոլորտը ՀՀ-ում և բացահայտել զարգացման միտումներն ու հիմնախնդիրները,
- գնահատել ՓՄՁ ոլորտի դերը ՀՀ տնտեսության զարգացման գործում,
- ուսումնասիրել ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցության չեզոքացմանն ուղղված համաշխարհային փորձը և առաջարկել Հայաստանում դրանց կիրառման հնարավոր ուղիներ:



Գծապատկեր 1. ՓՄՁ-ների քանակը 2012 թ.

ՓՄՁ ոլորտի ներկայիս իրավիճակը Հայաստանի տնտեսության մեջ պետք է դիտարկել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության ներքո, որոնցից մեկը նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքն է՝ իր ազդեցությամբ ինչպես զարգացած երկրների, այդպես էլ Հայաստանի տնտեսության վրա: 2008 թ. աշխարհում սկսված ֆինանսատնտեսական ճգնաժամն իր ուժգնությամբ և խորությամբ հանկարծակիի բերեց երկրների կառավարություններին և գործատուներին: Շատ պետություններ արձագանքեցին թուլացնելով դրամավարկային քաղաքականությունը և ամրապնդելով հարկաբյուջետային քաղաքականությունը՝

սպառման և ներդրման տեմպերը վերակենդանացնելու համար<sup>1</sup>: Սակայն, այս խնդիրներից զատ, ՀՀ ՓՄՁ ոլորտը կրկին բռնեց զարգացման ուղին (տե՛ս գծանկար 1): Եվ 2012 թ. արդեն ակներև էր հետևյալ պատկերը. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում գործունեություն է իրականացրել 73,925 ՓՄՁ, ինչը կազմում է ակտիվ գործունեություն իրականացնող տնտեսավարողների ընդհանուր թվաքանակի 98%-ը: 2012 թ. ընթացքում ՓՄՁ-ների քանակը, 2010-ի համեմատ, ավելացել է շուրջ 25%-ով<sup>2</sup>:

2012 թ. ՓՄՁ-ների 92%-ը եղել է գերփոքր կազմակերպություն, իսկ միջինների տեսակարար կշիռը չի գերազանցել 1.2%-ը: ՓՄՁ-ների ընդհանուր քանակի 97%-ով աճը պայմանավորված է եղել գերփոքրերի աճով: ՓՄՁ-ների 58.7%-ը ներգրավված է մեծածախ և մանրածախ առևտրում, ընդ որում՝ այդ ձեռնարկությունների 98%-ը գերփոքր սուբյեկտներ են: Մշակող արդյունաբերության մեջ եղել է 6,061 ՓՄՁ կամ ընդհանուր քանակի 8.2%-ը: 2012 թ. արդյունքներով մշակող արդյունաբերության ՓՄՁ-ների 40%-ը ներգրավված էր պարենային, իսկ 60%-ը՝ ոչ պարենային արտադրության մեջ: ՓՄՁ-ներում զբաղվածների թիվը կազմել է 290,388 մարդ՝ 2010 թ. նույն ցուցանիշը գերազանցելով 31,769-ով կամ 12.3%-ով: ՓՄՁ-ներում զբաղվածների 61%-ը կենտրոնացված է Երևանում, մարզերից առաջատարներն են Կոտայքը՝ 7%, Լոռին և Շիրակը՝ 6% յուրաքանչյուրում, ամենացածր ցուցանիշները Վայոց ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզերում են: 2012 թ. ընթացքում ՓՄՁ-ների ընդհանուր շրջանառությունը կազմել 1,554,679 մլն դրամ՝ 2010 թ. նույն ցուցանիշը գերազանցելով 237,471 մլն դրամով կամ 18%-ով: Ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ այս միտումը վատ արդյունք չապահովեց ՀՀ տնտեսության համար:

Աղյուսակ 1

**Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ-ի\* հաշվեկրկություններ**

Արակցության ուղղություն	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.
Ցեղեկատվական և խորհրդատվական	3588	7398	15647	13064	11857	8417	10337
Մատչողական	-	515	321	300	407	126	246
Ավանդ գործառնելու թեմերիցության աջակցություն	95	209	462	536	403	152	464
Վարչակազմի կազմակերպություններ	28	150	243	235	176	18	81
Քիմիկատի միջազգայնացում՝ Ցեղեկատվությունների ելուստային ցանց	69	191	243	154	259	193	348
Ընդունվել աջակցության ծրագրեր/դրամաշնորհներ	-	44	127	181	67	11	12
<b>ԸՆԴԱՄԱՆԸ</b>	<b>3780</b>	<b>8507</b>	<b>17243</b>	<b>14688</b>	<b>13194</b>	<b>8917</b>	<b>11487</b>
Ցեղեկական տնտեսական զարգացման ծրագրում ցուցված համայնքների ցանակ	-	10	23	46	10 (35)	19	9
Իրազման գործընկերության ցանակ/նկարագրագրվածներ	-	-	230	181	26	5/8	12
Երբ անհրաժեշտ է՝ ՊՄՁ-ների աճից փոխհատուցում					611	472	126

2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ՓՄՁ պետական աջակցության 2017 թ. ծրագրի շրջանակում շուրջ 4700 սկսնակ և գործող ՓՄՁ-ների տրամադրվել է 11,487 աջակցություն (տե՛ս աղյուսակ 1)<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Օվանյան Ա. Ա., Проблемы развития малого и среднего предпринимательства в РА в условиях мирового финансового кризиса:

<sup>2</sup> <https://www.smednc.am>

\* Զարգացման ազգային կենտրոն

Այս ծրագիրը հնարավորություն կտա զարգացնել ՓՄՁ ոլորտը, որը մեծ կարևորություն ունի մեր հանրապետության տնտեսության համար: Աջակցություն ստացած ՓՄՁ-ների 3.3%-ը գործում է Երևան քաղաքում, 96.7%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

**Աջակցություն ստացած ՓՄՁ-ները ըստ մարզերի**

Երևան	379
Արագածոտն	1126
Արարատ	902
Արմավիր	410
Գեղարքունիք	1029
Կոտայք	1958
Լոռի	2328
Շիրակ	888
Սյունիք	407
Վայոց Ձոր	1057
Տավուշ	1003

Այս ամենից զատ, ինչպես անցումային տնտեսությամբ որոշ երկրներում, այնպես էլ Հայաստանում, առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են ՓՄՁ-ների զարգացումը: Պատճառը թերևս պետք է փնտրել մի շարք գործոնների մեջ: Նախ և առաջ, ՀՀ-ում ՓՄՁ-ներին առնչվող օրենքներում չափորոշիչների սահմանումը ոչ լիարժեք է: Եթե Եվրամիության երկրներում ՓՄՁ-ների դասակարգման համար գոյություն ունեն քանակական և որակական չափանիշներ, ապա ՀՀ-ում ուղղորդվում են միայն քանակական չափորոշիչներով: Ըստ այդմ, Եվրամիության երկրներում ընկերությունները դասակարգվում են որպես՝ գերփոքր, եթե աշխատողների միջին տարեկան թվաքանակը 0-ից 9 է և ունի մինչև 2 միլիոն եվրո տարեկան շրջանառություն, փոքր, եթե ունի 10-14 աշխատող և մինչև 10 միլիոն եվրո շրջանառություն, միջին, եթե ունի 50-250 աշխատող և մինչև 50 միլիոն եվրո շրջանառություն: ՀՀ-ում, մյուս կողմից, գործունեություն ծավալող գերփոքր ձեռնարկություն են համարվում տարեկան միջինում 5, փոքր՝ 15-50 և միջին՝ 30-100 աշխատող ունեցող ընկերությունները<sup>2</sup>:

Կատարված ուսումնասիրության արդյունքում բացահայտված ՀՀ ՓՄՁ ոլորտի հարկային համակարգի խոչընդոտների շարքն են դասվում հետևյալ հիմնախնդիրները՝

- գրանցման գործընթացների բարդություն,

<sup>1</sup> <https://www.smednc.am/am/content/reports/>

<sup>2</sup> Տե՛ս «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 2:

- հարկային օրենսդրության հաճախակի փոփոխություններ,
- հարկային վարչարարության տարբեր ձևերի առկայություն,
- հարկային մեխանիզմների թույլ համակարգվածություն,
- հարկային օրենսդրության բարդություն,
- հարկային խորհրդատվության հետ կապված ծախսեր,
- կարճ և ոչ ճկուն հարկային վճարումների վերջնաժամկետների բացակայություն:

Վերոհիշյալ խնդիրները բնորոշ են գրեթե բոլոր երկրներին, սակայն դրանք անհրաժեշտ է լուծել: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ կան մի շարք առանցքային հարցեր, որոնք միևնույն են գրեթե բոլոր երկրների համար, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության: Դրանք են տեղեկատվությունը, հարկային հաշվապահությունը, փաստաթղթերի լրացումն ու վճարման համակարգերը:

Մեր կարծիքով, առաջիկա տարիներին ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների շրջանակը պետք է ընդգրկի հետևյալ հիմնախնդիրների լուծմանն ուղղված քայլերը՝

- օրենսդրությունը դարձնել առավել թափանցիկ,
- պահանջվող մեծածավալ թղթաբանության կրճատում,
- ԱԱՀ-ի վերադարձման համակարգի բարելավում,
- տուգանքների համակարգի բարելավում,
- հարկային դրույքաչափերի վերլուծություն և այլն:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում 2000 թվականից ի վեր հարկային վարչարարության մեջ կատարվել են որոշակի բարելավումներ: Այդուհանդերձ, ՓՄՁ-ների մեծամասնությունը համարում է, որ հարկային վարչարարությունը խաթարում է Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության զարգացումը:

Համաձայն Համաշխարհային բանկի խորհրդատվական մարմնի՝ FIAS կազմակերպության հրապարակած զեկույցի<sup>1</sup>՝ ՓՄՁ-ների 22%-ը հարկերը և հարկային վարչարարությունը համարում է լուրջ խոչընդոտ հանրապետությունում այդ ոլորտի զարգացման համար:

ՀՀ-ում ՓՄՁ զարգացմանն ուղղված պետության կարևոր քայլերից կարելի է համարել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ստեղծումը, որը կոչված է պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ՓՄՁ-ներին տրամադրել մարքեթինգային, տեղեկատվական, խորհրդատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցություն:

2010 թ. ընթացքում, օրինակ, ՓՄՁ ՀԱԿ-ի կողմից պետական աջակցության ծրագրերի համար հատկացված գումարը կազմել է 272 մլն դրամ<sup>2</sup>:

Այսպիսով, հետազոտություններն ու վերլուծությունները թույլ են տալիս կատարել մի շարք եզրակացություններ և ձևավորել հետևյալ հիմնական առաջարկությունները՝

1. Ֆինանսական հատվածի զարգացում և ֆինանսական միջոցների հասանելիության ընդլայնում: Պետական կառույցների ուշադրության

<sup>1</sup> Տե՛ս Enterprise surveys: Armenia country profile, 2009, IFC/World Bank, էջ 4:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2010 թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, էջ 2 :

կենտրոնում պետք է շարունակեն մնալ մարզերում և հատկապես գյուղական համայնքներում գործող ՓՄՁ-ները և դրանց ֆինանսավորման միջոցների մատչելիությունը՝ միկրոֆինանսավորման գործիքների կիրառման շրջանակներում,

2. ՓՄՁ-ների գործարար ներուժի օգտագործում և արտադրանքի՝ միջազգային շուկաներ արտահանման խթանում,
3. համայնքային և քաղաքային տրանսպորտի ցանցի ենթակառուցվածքների բարելավում,
4. ՓՄՁ ոլորտի իրավասօրենսդրական հիմքերի և ներդրումային միջավայրի բարելավում,
5. զբոսաշրջության խթանում և ոլորտի զարգացման համար նախադրյալների ստեղծում: Այս առումով Հայաստանն ունի հսկայական ներուժ՝ պատմամշակութային հարուստ ժառանգություն, բազմազան բնաշխարհ, ինքնատիպ ավանդույթներ, և զբոսաշրջության զարգացումը կարող է մեծածավալ ներդրումների հոսք ապահովել դեպի մեր երկիր:

Այս առաջարկությունների իրագործումը կարող է անմիջական դրական ազդեցություն ունենալ մեր երկրում ՓՄՁ-ների զարգացման վրա, քանի որ այդ երկու ոլորտների գործառույթներում կան նմանություններ: Զարգացնելով զբոսաշրջությունը, ենթակառուցվածքները, ֆինանսական և հարկային դաշտը՝ պետությունը անուղակիորեն զարկ կտա նաև ՓՄՁ ոլորտի զարգացմանը ամբողջ երկրում՝ հատկապես գյուղական համայնքներում:

## МЕРИ АРАКЕЛЯН

### ВОПРОСЫ РАЗВИТИЯ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА В АРМЕНИИ

**Ключевые слова:** *малый бизнес, развитие малого бизнеса, МСП, развитие малого бизнеса, малые предприятия, проблемы развития.*

*Динамика развития малого и среднего бизнеса в современной рыночной экономике имеет первостепенное значение для развития страны. Его влияние на достижение целей для решения социально-экономических проблем каждой страны требует постоянного мониторинга состояния и анализа многих факторов, влияющих на его деятельность. Это также важный вопрос для экономики Армении. Поэтому странам следует уделять большое внимание этим вопросам.*

## MERY ARAKELYAN

### SMALL AND MEDIUM BUSINESS DEVELOPMENT IN ARMENIA

**Key words:** *small business, development of small business, SME, small business development, small enterprise, development issues.*

*Nowadays in the context of market economy the dynamics of development of small and medium entrepreneurship have a great importance for the development of the country. Its impact on the achievement of goals for the solution of social and economic problems of each country, which requires continuous monitoring by the government/state and analysis of many factors affecting its activities. This is also an important issue for the Armenian economy. Therefore countries should pay great attention to these issues.*